# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Ներածություն

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Կալինինի 4-րդ նրբանցք, մինչև Վ. Անանյան անվան դպրոց ավտոճանապարհի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգումը կատարվում է Դիլիջանի համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Նախագիծը կազմված է Դիլիջանի համայքապետարանի կողմից տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի, թերությունների ակտի հիման վրա: Համաձայն վերը նշված առաջադրանքների վերանորոգվում է ներհամայնքային ճանապարհները ընդհանուր - 700.0 գծմ երկարությամբ:
Ճանապարհի հատակագիծը,երկայնական և լայնական կտրվածքները փոփոխության չեն ենթարկվում:
Ներհամայնքային ճանապարհներում նախատեսված է նորոգել գոյություն ունեցող ասֆալտ-բետոնե ծածկույթը /նորոգել առաջացած ոչ մեծ ծավալների վնասվածքները,քանդվածքներ, փոսեր,եզրերի կտրվածքներ և այլն/:

Նորոգման աշխատանքները կազմակերպվում են չոր եղանակներին խոնավ լինելու դեպքում վերանորոգվող հատվածները պետք է անպայման չորացվեն:Ասֆալտ-բետոնային պատվածքների նորոգման ամենածավալային և հաճախակի իրականացվող աշխատանքներից մեկը փոսային նորոգումն է: Փոսային նորոգումները կատարվում են տաք ասֆալտ-բետոնային խառնուրդով,մոտավորապես նույն կազմով,ինչպիսին ունի ինքը պատվածքը:Մինչև նորոգման աշխատանքները սկսելը նորոգվող հատվածները մաքրում են ցեխից և քայքայված շինություններից:Նորոգման ենթակա հատվածները կավիճով եզրագծվում են,ճանապարհի առանձին զուգահեռ և ուղղահայաց ձևերով,այպես նրանք ընդգրկեն պատվածքի չքայքայված հատվածը 3-5սմ լայնությամբ:Նշված ձևով քանդված հատվածները կտրվում են հետահատ մուրճով:Եթե վնասվածքի խորությունը մինչև 2.5սմ է,կտրվում կատարվում է պատվածքի վերևի շերտի ամբողջ խորությամբ,իսկ ավելի խորությունը վնասվածքների դեպքում ամբողջ պատվածքի հատույթում և ստացվում է «արկղեր» ուղահայաց պատերով:Վնասվածքների եզրերը կտրելուց հետո «արկղերը» մաքրում են շինանյութերի մնացորդներից փողոցի մետաղական խոզովակներով օդափչման միջոցով:Կտրված տեղերը,պատերը պատվում են այնպիսի կապակցվող նյութի բարակ շերտով,

ինչպիսիք օգտագործվում են պատվածքի պատրաստման ժամանակ:
Կատարվում է ճանապարհի համատարած ասֆալտապատում , բիտումի տարածումով
Խճային հիմքի ավելացումից հետո այդ ծածկերը մշակվում է օրգանական կապակցվող նյութով, այդ պրոցեսը թույլատվում է երբ օդի ջերմաստիճանը բարձր է 15 աստիճանից: Քարային նյութերը բիտումով կարելի է մշակել, երբ նյութերի խոնավությունը չի գերազանցում 4 %: Խառնուրդի ավելի բարձր խոնավության դեպքում այն պետք է չորացնել` խառնելով ավտոգրեյդերով: Ասֆալտբետոնե խառնուրդները պետք է համապատասխանեն ԳՈՍՏ 9128-97 պահանջներին: Ասֆալտբետոնի խառնուրդները պետք է տեղադրել չոր եղանակին: Գարնանն ու աշնանը տաք և սառը խառնուրդներ հարկավոր է տեղադրել, երբ շրջակայքի ջերմաստիճանը ցածր չէ 10 աստիճանից: Խտացնող չորսուով ու պասիվ արդուկող սալով սարքավորված ասֆալտատեղադրիչով տեղադրելու դեպքում խտաղման հաջորդականությունը հետևյալն է`

-ֆ և ժ տիպի խիտ, խճի 40 % և ավելի պարունակությամբ ծակոտկեն և բարձր ծակոտկենությամբ ասֆալտբետոնե խառնուրդները սկզբում խտացնում են 16 տ քաշով գլդոնի մեկ հետքով 6-10 անցումներով կամ 10-13 տ քաշով հարթ թմբուկավոր գլդոնի 8-10 անցումներով կամ 6-8 տ քաշով թրթռագլդոնի 5-7 անցումներով և վերջնական` 11-18 տ քաշով հարթ թմբուկավոր գլդոնի 6-8 անցումներով:

-ժ , վ և ր տիպի խիտ, խճի 40 % և պակաս պարունակությամբ ծակոտկեն և բարձր ծակոտկենությամբ, ինչպես նաև բարձր ծակոտկենությամբ ավազային ասֆալտբետոնի խառնուրդները սկզբում խտացնում են 6-8 տ քաշով հարթ թմբուկավոր գլդոնի կամ 6-8 տ քաշով թրթռիչն անջատած թրթռագլդոնի մեկ հետքով 2-3 անցումներով, այնուհետև 16 տ քաշով պնևմատիկ դողերով գլդոնի 6-10 անցումներով, կամ 10-13 տ քաշով հարթ թմբուկավոր գլդոնի 8-10 անցումներով կամ 6-8 տ քաշով թրթռագլդոնի 3-4 անցումներով և վերջնական` 11-18 տ քաշով հարթ թմբուկավոր գլդոնի 4-8 անցումներով:

Խտացման սկզբում գլդոնների արագությունը չպետք է գերազանցի 1.5 - 2 կմ/ժ, 5-6 անցումներից հետո հարթ թմբուկավոր գլդոնների արագությունը կարելի է հասցնել 3 - 5 կմ/ժ -ի, թրթռագլդոններինը` 3 կմ/ժ -ի, պնևմատիկ դողերով գլդոններինը` 5 - 8 կմ/ժ -ի:

## 2. Շրջակա միջավայրի պահպանում

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամ- քով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը շինարարական աղբից, բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

Շին. կազմակերպության աշխատողները և ղեկավարները պետք է միշտ հիշեն շրջակա միջավայրի պահպանման մասին : Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաս-տաթղթերը. ՇՆ և Կ III - 4.80 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում» ՇՆ և Կ III - 1.75 «Շինարարական արտադրության կազմակերպում»:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Կալինինի 4-րդ նրբանցք, մինչև Վ. Անանյան անվան դպրոց ավտոճանապարհի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգման աշխատանքային նախագիծը մշակված է համաձայն ՇՆուԿ 3.01.01 - 85 « Շինարարության արտադրության կազմակերպում » և ՇՆ - 440 - 7 « Շինարարության տևողության նորմեր » ձեռնարներին համապատասխան :

Ճանապարհի նորոգման աշխատանքները կատարվելու են ճանապարհի վրա, որը ըստ ՀՀՇՆ 2 - 02 - 94 - ի գտնվում է սեյսմիկ 2 - րդ գոտում :

- Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական , տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ
- Հակահրդեհային անվտանգությունը շին հրապարակում և աշխատանքի տեղամասերում պահպանել համապատասխան հակահրդեհային անվտանգության կանոններ ձեռնարկի պահանջներով
- Հողային աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային գծագրերի և ՇՆուԿ 3 - 02 - 01 - 87 - ի ձեռնարկի պահանջներով
- Կրող և պատող կոնստրուկցիաների աշխատանքները կատարել համաձայն ՇՆուԿ 3 - 03 - 01 - 87 - ի և ՇՆուԿ III - 3 - 80 ձեռնարկների և աշխատանքնային գծագրերի պահանջներով

Ճանապարհի փոսային նորոգման շինարարության տևողությունը հաշվարկված է ՇՆ - 440 - 79 - ի ընդհանուր դրույթների կետ 19 - ի համաձայն : Աշխատանքների ժամկետները և հերթականությունը տրված են կից ներկայացվող ժամանակացույցում :

- Աշխատանքները կատարելու ժամանակ ձեռնարկել միջոցառումներ տարածքի կանաչապատ գոտիների պահպանման և շրջապատի օդի փոշոտացման բացառման համար :

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | ՔՈՉԱՐՅԱՆ | | ՀՀ Տավուշի մարզ Դիլիջան համայնքի Կալինինի 4-րդ նրբանցք,մինչև Վ. Անանյան անվան դպրոց ավտոճանապարհի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգում | | | |
| Ն Գ Ի | ՄԱԿՈՒՆՑ | | | | | |
| ԳԾԵՑ | ԱՆՏՈՆՅԱՆ | | Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՍՏՈՒԳԵՑ | ՄԱԿՈՒՆՑ | | | Ա Ն | ՃՇ - 2 | 10 |
| | | | Բացատրագիր | «ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ»ՍՊԸ | | |
| | | | | | | |